11. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

11.1. Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ (ծածկագիր՝ 63-2.2-27)

Մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում Վարչության պետին: Աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը: Համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ: Մասնակցում է բնության հատուկ պահպանվող տարածքներին առնչվող պետական ծրագրերի և կառավարման պլանների մշակմանը: Աջակցում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն իրականացնող ծառայություններին: Լիցենզառուին հանքային իրավունքներ տրամադրելու կամ արգելելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Վարչության պետին: Մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը Մարզի տարածքում: Իրականացնում է պետական ծրագրեր անտառների և անտառային հողերի պահպանության և օգտագործման նպատակով:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 15.2 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 28.10.2014թ.՝ ժամը 14[15]-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):